

ՁԱՆԳՎԱՃԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉԵՏ ՃԻՇՏ ՉԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

հաշմանդամություն ունեցող կանանց
համար



Funded by
the European Union





Funded by
the European Union



Սույն ուղեցույցը տպագրվել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և «ՄԱԿ Կանայք»-ի ու ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության. Միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի և բռնության» ծրագրի շրջանակներում:

Այս ուղեցույցը տպագրվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամն ու «ՄԱԿ Կանայք» կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Նախարան

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի հուլիսի 1-ի վիճակագրական տվյալներով՝ Հայաստանում գրանցված է **194 640** հաշմանդամություն ունեցող անձ, որից **92 805**-ը հաշմանդամություն ունեցող կանայք են: Շիրակի մարզում հաշմանդամություն ունեցող կանանց թիվը կազմում է 9457, Լոռու մարզում՝ 9304, Տավուշի մարզում՝ 4263:

Հաշմանդամություն ունեցող կանայք, իրենց սեռով և հաշմանդամությամբ պայմանավորված, **առավել խոցելի են. նրանք ավելի հաճախ են ենթարկվում խտրականության և բռնության:**

Մի կողմից հասարակությունը թերահավատ է հաշմանդամություն ունեցող կանանց կարողությունների և հաջողությունների նկատմամբ, մյուս կողմից՝ հաշմանդամություն ունեցող կանայք շատ հաճախ ամաչում են բարձրաձայնել իրենց հաջողությունների մասին, տեսանելի լինել իրենց համայնքում և լրատվամիջոցներում:

Լրատվամիջոցների լուսաբանումը կարևոր դեր է խաղում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և մարտահրավերների մասին հանրությանը կրթելու գործում: Այն հզոր ուժ է խարանհին և ապատեղեկատվությանը հակազդելու համար և հզոր դաշնակից՝ ընկալումները փոխելու, խտրականությունը վերացնելու և հանրային իրազեկվածությունը բարձրացնելու գործում:

Ցավոք, հաշմանդամության մասին վախն ու կարծրատիպերը խորն են արմատացած հայկական



մշակույթում և արտացոլված ՉԼՄ-ների լուսաբանման մեջ. հաշմանդամություն ունեցող կանայք հազվադեպ են դիտվում իրենց հաշմանդամության շրջանակներից դուրս՝ որպես անհատներ: Նրանց մտահոգությունները անտեսանելի են, մարզինալացված կամ բացասական կարծրատիպերով են պատկերված լրատվամիջոցներում: Երբ հաշմանդամություն ունեցող կանայք հայտնվում են լրատվամիջոցներում, նրանց ներկայացնում են 2 կատեգորիաներով՝ «զոհ» կամ «հերոս»: Արդյունքում ունենում ենք կա՛մ հեռուստադիտողների խղճահարություն առաջացնող պատմություններ, կա՛մ իրենց հաշմանդամությունը «հաղթահարած» մարդկանց պատմություններ:

Հաշմանդամություն ունեցող կանայք չունեն համապատասխան հմտություններ՝ ՉԼՄ-ներին ներկայացնելու իրենց իրավունքների, մարտահրավերների և ձեռքբերումների մասին:

Սույն ուղեցույցը նախատեսված է հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար, որպեսզի բարձրացնի վերջիններիս իրազեկությունը և զարգացնի ՉԼՄ-ներին հարցազրույց տալու նրանց հմտությունները:

Ուղեցույցը պարունակում է խորհուրդներ և առաջարկներ հաշմանդամություն ունեցող կանանց համար՝ ինչպես աշխատել ՉԼՄ-ների հետ, պատրաստվել հարցազրույցի:

Ուղեցույցը պատրաստվել է «Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից՝ **«Ես կարող եմ կոտրել**



կարծրատիպեր իմ համայնքում» ծրագրի
շրջանակներում:
Ծրագիրն իրականացնում է **«Ագաթ»**
հաշմանդամություն ունեցող կանանց
իրավունքների պաշտպանության կենտրոն ՅԿ-ն՝
Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող և
«ՄԱԿ Կանայք»-ի ու ՄԱԿ-ի Բնակչության
հիմնադրամի կողմից իրականացվող «ԵՄ-ն
հանուն կանանց և տղամարդկանց
իրավահավասարության. Միասին ընդդեմ
գեղեցիկ կարծրատիպերի և բռնության»
ծրագրի շրջանակներում:



ՉԼՄ-ներ և հարցազրույց

Չանգվածային լրատվության միջոցները լրատվական տեխնոլոգիաների ամբողջությունն է, որը, զանգվածային հաղորդակցության շնորհիվ, ունի մեծ լսարան: Տեխնոլոգիաները, որի միջոցով տեղի է ունենում այս հաղորդակցությունը ներառում է զանազան միջոցներ:

Ջեռարձակվող մեդիան տեղեկատվությունը հաղորդում է էլեկտրոնային եղանակով, այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝ ռադիոն, երաժշտությունը կամ հեռուստատեսությունը:

Թվային մեդիան ներառում է և՛ համացանցը, և՛ հեռախոսային զանգվածային հաղորդակցությունը:

Չամացանցային մեդիան ներառում է այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են վեբկայքերը, սոցիալական մեդիայի էջերը և համացանցի միջոցով գործող ռադիոն և հեռուստատեսությունը:



ՉԼՄ-ների համար հարցազրույցները լինում են տարբեր ձևերի և տևողությամբ: Երբեմն մարդիկ հարցազրույց են տալիս մենակ կամ

հակադիր հայացքներ ունեցող անձանց հետ: Չամախ հարցազրույցները կարող են լինել բավականին երկար, իսկ երբեմն շատ հակիրճ՝ պարզապես ներառելով մեկ-երկու հարց: Չարցազրույցները կարող են լինել ուղիղ եթերում կամ կարող են նախապես ձայնագրվել, խմբագրվել, այնուհետև հեռարձակվել կամ տարածվել:



Ի՞նչն է հետաքրքրում լրագրողին



Հարցազրույց տալուց առաջ ամենակարևորը պետք է նկատի ունենալ, որ լրագրողների մեծ մասը չի ուզում Ձեզ անհարմար դրության մեջ դնել կամ վնասել:

Լրագրողների համար կարևոր չէ՝ **Դուք քաղաքական գործիչ եք, հայտնի մարդ, հանրային դեմք, թե ուղղակի հասարակ քաղաքացի:**

Հիմնականում նրանք ուզում են ներկայացնել կյանքի փորձ ունեցող անձանց հետաքրքիր պատմություններ:

Լրագրողներից ոմանք ունեն իրենց օրակարգը: Ուստի շատ օգտակար կլինի նախքան հարցազրույց տալը տեղեկանալ լրագրողի, նրա մոտեցման և հավանական հարցերի վերաբերյալ:

Նրանք Ձեզ նախօրոք կասեն, թե ինչ են ուզում ներկայացնել, ինչ հարցեր են ուղղելու Ձեզ և հարցազրույցի ձևաչափը:

Եթե Ձեզ անվստահ կամ անհանգիստ եք զգում, կարող եք խորհուրդ հարցնել ՁԼՄ-ներում աշխատող կամ հարցազրույց տալու փորձառություն ունեցող Ձեր ծանոթներից:



Ի՞նչ հարցեր կարող եք տալ լրագրողներին



կարող եք տալ Ձեզանից հարցազրույց վերցնող լրագրողին:

- ❖ Ո՞վ է զանգում կամ գրում (լրագրողի անունը)
- ❖ Որտեղի՞ց են նրանք զանգահարում (օրինակ, հանրային կամ տեղական հեռուստաընկերություն, ռադիոընկերություն, առցանց լրատվական հարթակ և այլն)
- ❖ Ինչի՞ մասին են նրանք ցանկանում խոսել և ինչու՞ են Ձեզ ընտրել
- ❖ Հարցազրույցը ուղիղ եթերով է հեռարձակվելու, թե՞ նախապես ձայնագրվելու է
- ❖ Հարցազրույցն անցկացվելու է լրատվական ստուդիայում, թե՞ այլ վայրում
- ❖ Ո՞վ է վարելու հարցազրույցը
- ❖ Ձեզանից բացի, որևէ այլ անձ մասնակցելու՞ է հարցազրույցին, ո՞վ է այդ անձը
- ❖ Արդյո՞ք հարցազրույցի անցկացման վայրը մատչելի է
- ❖ Լսողության խնդիր ունենալու դեպքում արդյո՞ք կտրամադրվի ժեստերի լեզվի թարգմանիչ:

Վերջին երկու հարցերը հնարավորություն կտան քննարկել Ձեզ համար մատչելիության ապահովման ավելի մանրամասն հարցեր:



Եթե հարցազրույցի թեման բաց է

Եթե լրագրողը Ձեզ հրավիրում է հարցազրույցի և ասում, որ Դուք կարող եք խոսել ցանկացած թեմայի շուրջ, առաջարկե՛ք ներքոնշյալ թեմաները:

- ❖ Գեներային և հաշմանդամության հիմքով խտրականություն
- ❖ Հաշմանդամություն ունեցող աղջիկների կրթության և զբաղվածության հիմնախնդիրներ
- ❖ Հարգալից հարաբերություններ ամուսինների և ծնողների միջև
- ❖ Հաշմանդամություն ունեցող կանանց սեռական և վերարտադրողական առողջության իրավունքները և մարտահրավերները, որ վերջիններս բախվում են այդ ծառայություններից օգտվելիս
- ❖ Հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը և բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունների անմատչելիությունը
- ❖ Հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների իրավունքները փակ հաստատություններում
- ❖ Քաղաքական մասնակցություն
- ❖ Կրթության մատչելիություն:



Ինչպե՞ս նախապատրաստվել հարցազրույցի



Հարցազրույցի նախապատրաստվելիս հիշեք, որ Դուք ուժեղ եք: Վստահ եղեք, որ Դուք բավականին փորձ ունեք ու կարող եք արժեքավոր խոսք ասել, որը հարցազրույցը կդարձնի առանձնահատուկ:

Լրատվականների միջոցով Դուք կարող եք սոցիալական փոփոխությունների հասնել:

Հարցազրույցի նախապատրաստման համար կան մի քանի հիմնական ցուցումներ:

- ❖ Տանը կամ աշխատավայրի ազատ սենյակներից մեկում առանձնացեք, կենտրոնացեք և հանգիստ նախապատրաստվեք ցանկացած հարցազրույցի:
- ❖ Մի՛ շտապեք. Դուք պարտավոր չեք հարցազրույց տալ որոշակի սահմանափակ ժամանակահատվածում: Եթե հաշմանդամությունով պայմանավորված լրացուցիչ ժամանակի կարիք ունեք, անպայման տեղեկացրեք լրագրողին:
- ❖ Դուք չպետք է հարցազրույց տաք հանպատրաստից: Լրագրողից վերցրեք հեռախոսահամար, Էլեկտրոնային հասցե կամ կապի այլ նախընտրելի տվյալներ և ասեք, որ կապ կհաստատեք նրա հետ: Անպայման կապվեք լրագրողի հետ, որքան հնարավոր է շուտ, քանի որ նրանք սեղմ վերջնաժամկետներ ունեն: Եթե



պարտաճանաչ լինեք, լրագրողները, ամենայն հավանականությամբ, նորից Ձեզ կդիմեն:

- ❖ Մի ընկճվեք, եթե լրագրողը կամ հարցազրույցի մասնակիցներից մեկը օգտագործում են խտրական բառապաշար: Նրանք միտումնավոր չեն անում: Ավելի ուշ Ձեր խոսքում օգտագործեք և կրկնեք ճիշտ տերմինը:
- ❖ Մտածեք թեմայի մասին, իսկ եթե թեմայի վերաբերյալ քիչ ասելիք ունեք, խոսեք ինչ-որ մեկի հետ, ով կարող է Ձեզ օգնել: Սա կդարձնի Ձեր հարցազրույցն ավելի տպավորիչ: Մշակեք Ձեր հիմնական ուղերձները:
- ❖ Եթե պատրաստվում եք մասնակցել հեռուստահաղորդման, ուսումնասիրեք հաղորդումը, վարող լրագրողին և պարզեք հաղորդման ժանրը (օրինակ՝ քաղաքական շոու է, առավոտյան հաղորդում, անհատական երկխոսություն և այլն):
- ❖ Առաձևացրեք երեք հիմնական կետ, քանի որ դժվար թե շատ ավելին ասելու հնարավորություն ունենաք: Ասեք Ձեր հիմնական ուղերձները՝ պարզ և դրական երանգով:
- ❖ Չարցազրույցի համար հետազոտեք, թե քանի գյուղաբնակ հաշմանդամություն ունեցող կին է բռնության ենթարկվել: Լրագրողները սիրում են թվեր և փաստեր:
- ❖ Խուսափեք այնպիսի բառեր օգտագործելուց, որ շատերը չեն հասկանում: Դուք կարող եք լինել փորձագետ Ձեր թեմայի մեջ, բայց դիտողների և ունկնդիրների մեծ մասը իրազեկ չեն Ձեր ոլորտից: Արտահայտեք Ձեր մտքերը պարզ, կարծես խոսում եք 10 կամ 12 տարեկան երեխայի հետ:



- ❖ Խուսափեք այո/ոչ հարցերի պատասխաններից: Փոխարենը, օգտագործեք դրանք որպես Ձեր հիմնական ասելիքի ներածություն:

Օրինակ` Հարց.

Ի՞նչ եք կարծում, Հայաստանի կառավարությունը բավարար մեխանիզմներ ապահովում է պաշտպանելու հաշմանդամություն ունեցող կանանց և աղքիկների իրավունքները: Պարզապես «այո» կամ «ոչ» պատասխանելու փոխարեն, պատասխանեք ավելի մանրամասն:

Օրինակ`

Պատասխան` «այո»

-Այո, Հայաստանը ճիշտ ճանապարհին է և վավերացրել է ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան, իսկ 2021 թվ.-ին ընդունել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը: Մենք դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու, որպեսզի լիարժեք կիրարկենք մեզ վերաբերող օրենքները:

Պատասխան` «ոչ»

-Ոչ, թեև Հայաստանը ստանձնել է միջազգային պարտավորություններ` ապահովելու հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքները, սակայն խիստ մտահոգիչ է, որ մենք շարունակում ենք բախվել բազմաթիվ խոչընդոտների և ենթարկվում խտրականության բոլոր ոլորտներում: Փոփոխությունները շատ դանդաղ են, իսկ մենք չենք կարող այլևս սպասել:

- ❖ Մի՛ պատասխանեք հիպոթետիկ հարցերին, եթե վստահ չեք: Եղեք քաղաքավարի, հաստատակամ և պնդեք Ձեր ասածը:
- ❖ Մի՛ անդրադարձեք ձեր հաշմանդամությանը, եթե հարցազրույցի թեման այլ է:



- ❖ Նախքան հարցերին պատասխանելը՝ ուշադիր լսեք յուրաքանչյուր հարց: Խնդրե՛ք այն կրկնել, եթե չեք հասկանում:
- ❖ Եթե դուք պատասխան չունեք, ուղղորդե՛ք լրագրողին, թե որտեղից կարելի է ինֆորմացիա ձեռք բերել:
- ❖ Չկա այնպիսի արտահայտություն, որը «հրատարակման ենթակա չէ»: Մի՛ ասեք այնպիսի բաներ, որոնք Դուք չեք ցանկանա լսել կամ տեսնել հետագայում: Իմացե՛ք, որ ցանկացած բան, որը Դուք կասեք ընկերական մտերմիկ միջավայրում, կարող է հայտնվել տպագրության մեջ կամ եթերում (Նույնիսկ, երբ Դուք կարծում եք, որ հարցազրույցն ավարտվել է, Ձեր ասած խոսքերը կարող են մեջբերել):
- ❖ Եղե՛ք ուշադիր, որպեսզի չչեղվեք հիմնական թեմայից:



- ❖ Առավել ինքնավստահ լինելու համար՝ նախօրոք նյութեր և արդիական տեղեկություններ հավաքեք թեմայի վերաբերյալ:
- ❖ Երբեք մի՛ գերազնահատեք կամ թերազնահատեք լրագրողի գիտելիքները Ձեր թեմայի վերաբերյալ: Եթե կարծում եք, որ լրագրողը ինֆորմացիայի վերաբերյալ սխալ հարցեր է տալիս, մի՛ վարանեք ուղղել դրանք: Առաջարկեք հավելյալ տեղեկատվություն, որտեղ անհրաժեշտ է:
- ❖ Լրատվությունը Ձեզ գովազդող ընկերությունն չէ: Նրա նպատակն է տեղեկացնել հանրությանը, այլ ոչ թե լինել Ձեր խոսնակը: Գրագետ լրագրողը կգրի ազնիվ և օբյեկտիվ պատմություն:
- ❖ Պատմե՛ք հաջողված, իրական պատմություններ, որոնք կբացահայտեն Ձեր տեսակետը:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ Դուք գնում եք հեռուստաընկերություն կամ ռադիոընկերություն



Մեդիա ընկերությունները սովորաբար չափազանց զբաղված են: Եթե Դուք սովոր չեք, դա կարող է նույնիսկ Ձեզ վախեցնել:



Ամենուր շատ մարդիկ կան, տեսախցիկներ և այլ սարքավորումներ, մալուխների պատճառով վտանգավոր է շարժվել ստուդիայում, իսկ շատ լույսերի հետևանքով ստուդիայում տոթ է:

Հարկ է հիշել, որ լրագրողները նույնպես շատ զբաղված են, և նրանք կարող են լինել բացահայտ ճնշման տակ՝ ներկայացնելու մեկի պատմությունը, այնուհետև անցնել հաջորդին:

Սովորաբար Դուք սպասում եք ընդունարանում, ինչ-որ մեկը գալիս է և տանում Ձեզ հարցազրույցի անցկացման վայր: Քանի որ ստուդիայի լույսերի տակ մարդիկ կարող են գուհատ երևալ հարցազրույցի համար կարող են Ձեզանից թույլտվություն վերցնել, որպեսզի դիմահարդարման անձնակազմը դիմահարդարի Ձեզ:

Այնուհետև Ձեզ կտանեն ստուդիա և կներկայացնեն հարցազրույցավարին:



Ձեզ կխնդրեն նստել որոշակի տեղում, Ձեզ կմիացնեն խոսափող, կբացատրեն, թե ինչ է տեղի ունենալու և կասեն հարցազրույցի հավանական

տևողությունը:


Եվ վերջապես, Դուք արդեն պատրաստ եք հարցազրույց տալու:



- ❖ Խոսե՛ք ավելի բարձր և եռանդուն, քան սովորաբար, բայց մի՛ բղավեք:
- ❖ Եթե Դուք նյարդայնացած եք, կարող եք ավելի մեղմ և հանդարտ խոսել, քան սովորաբար:
- ❖ Դուք պետք է խոսեք ավելի հնչեղ, երբ տեսախցիկի դիմաց եք: Եթե Դուք ընդամենը բարձրաձայն խոսեք, շատ անբնական կթվաք:
- ❖ Եթե տեսախցիկի կողքին Էկրան է տեղադրված, ապա հարցազրույցի ընթացքում դրա միջոցով Ձեզ մի նայեք: Դուք նյարդային և տարօրինակ տեսք կունենաք:
- ❖ Եթե Դուք կրում եք ականջակալ և կորցնում եք դրա ձայնը, հանդարտ հայտնեք Ձեր անունը և ասեք, որ ոչ մի բան չեք կարողանում լսել: Ռեժիսորը պետք է կարողանա Ձեզ լսել և կատարել անհրաժեշտ փոփոխությունները:



Խելամիտ հարմարեցումներ



Հայաստանի
հանրային և
մասնավոր
լրատվամիջոցներ
ի մեծ մասի
տարածքը
մատչելի է

անվասայլակով կամ այլ աջակցող սարքերով տեղաշարժվող անձանց համար: Մարզային կամ տեղական լրատվամիջոցների շենքերը հիմնականում անմատչելի են: Ուստի ցանկացած հարցազրույցից առաջ մի ամաչեք և հարցրեք տարածքի մատչելիության մասին:

Եթե Դուք հոգեկան առողջության խնդիր ունեք, Ձեզ համար օգտակար կլինի հարցազրույցից մի քանի րոպե առաջ հանգստանալու տեղ խնդրել կամ խնդրել նախնական էքսկուրսիա ստուդիայի տարածքում, որպեսզի նախքան հարցազրույց տալը զգաք, թե ինչպիսին է տարածքը:

Եթե խելամիտ հարմարեցումների կարիք ունեք, հարցազրույցից առաջ տեղեկացրեք, քանի որ դա կարող է օգտակար լինել ոչ միայն Ձեզ, այլև լրագրողի համար: Թեև լրագրողները շատ զբաղված են, նրանք նաև ցանկանում են վարել լավագույն հարցազրույցը և ստանալ հետաքրքիր պատասխաններ և մտքեր Ձեզանից:

Եթե նրանք նախապես գիտեն, թե ինչ խելամիտ հարմարեցում է Ձեզ հարկավոր, ապա ավելի հավանական է, որ կկարողանան ապահովել:



Եթե կարծում եք, որ հեռավար հարցազրույցը (օրինակ՝ Zoom-ի միջոցով) կլինի ավելի մատչելի Ձեզ համար, առաջարկեք լրագրողին, եթե հնարավոր է, հարցազրույցը վարել հեռավար:

Եթե լսողության խնդիր ունեք, խնդրեք ժեստերի լեզվի թարգմանչի ծառայության ապահովում:

Արդյո՞ք անհրաժեշտ է մասնակցել մեդիա դասընթացի

Մարդկանց մեծամասնությունը, ովքեր պարբերաբար հարցազրույցներ են տալիս, ինչ-որ մեդիա ուսուցում են անցել: Մեդիա ուսուցումը կարող է ներառել հարցազրույց տալու տարբեր իրավիճակներով դերախաղեր, լուսանկարչական սարքեր, տեսախցիկներ, լույսեր և այլն: Սա օգնում է մարդկանց ընտելանալ հարցազրույցներ տալու անսովոր միջավայրին, ինչպես նաև հարցազրույց տվողի դեմքին ուղղված տեսախցիկներին:



Վստահությունը լավ հարցազրույցներ տալու համար նախապայման է:

Հարցազրույց տալուց լարվելը կամ նյարդայնանալը բնական և նորմալ է: Մեղիա վերապատրաստումը կօգնի վստահության ամրապնդմանը, ինչպես նաև կգարգացնի հարցազրույց տալու հմտությունները:

Միայն Դուք կարող եք որոշել, արդյո՞ք Ձեզ անհրաժեշտ են մեղիա դասընթացներ: Հայաստանում կազմակերպվում են տարբեր դասընթացներ, եթե Դուք հետաքրքրված եք, կարող եք մասնակցել դրանց:

Ստորև ներկայացնում ենք մեղիա դասընթացներ կազմակերպող ընկերություններին:

- ❖ «Բոլորը հանուն հավասար իրավունքների» հիմնադրամ
- ❖ «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամ
- ❖ Հանրային լրագրության ակումբ
- ❖ «Մեղիա նախաձեռնությունների» կենտրոն
- ❖ Հայաստանի մարզերում գործող ինֆոտների ցանց:



Վերջաբան

Ինչպես հաշմանդամություն ունեցող անձինք, այնպես էլ հաշմանդամություն չունեցողները, նյարդայնանում և լարվում են հարցազրույց տալուց, հատկապես, եթե հարցազրույց տալու քիչ փորձ ունեն: Աշխատեք ինքներդ Ձեր վրա, մարտահրավեր նետեք Ձեր անհանգստությանը և վախերին:

Յիշե՛ք, ՁԼՄ-ները կարող են լինել հզոր դաշնակից՝ հաշմանդամության ոլորտում առկա հիմնախնդիրները բարձրացնելու համար:

Եղե՛ք հնարավորինս բարեհամբույր և բարյացակամ: Ստեղծե՛ք դրական հարաբերություններ ՁԼՄ-ի ներկայացուցիչների հետ՝ շարունակական համագործակցության համար:

Գիտակցե՛ք, որ Դուք ասելիք ունեք և Ձեր հարցազրույցը կարող է կոտրել շատ կարծրատիպեր և փոխել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների կյանքեր Ձեր համայնքում:





Շիրակի մարզ, ք. Գյումրի, 3104, Ջամբուկի 8/5



agate.ngo@gmail.com



+374 77 043 042

+374 98 043 142

Web



Facebook

